ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2005 թվականի հուլիսի 8-ին

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 08.12.11 ՀՕ-305-Ն)

Հոդված 55. Արձակուրդ տալու կարգը և առանձնահատկությունները

1. Հերթական արձակուրդը տրվում է օրացուցային տարվա ընթացքում՝ համաձայն հաստատված պլանի: Արձակուրդ տալու կարգը և հերթականությունը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը՝ հաշվի առնելով արձակուրդի հավասարաչափ օգտագործման անհրաժեշտությունը:

2. Հերթական արձակուրդից ծառայողին կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ արձակուրդ տրամադրած պաշտոնատար անձի հրամանով: Նման դեպքում չօգտագործված արձակուրդի մասը տրամադրվում է նույն տարում, եթե կազմում է 15 օր և ավելի: Չօգտագործած արձակուրդի օրերը ծառայողի ցանկությամբ միացվում են հաջորդ տարվա հերթական արձակուրդի օրերին:

3. Հերթական արձակուրդի օգտագործման ժամանակը որոշելու իրավունք վերապահվում է՝

ա) մարտական գործողությունների մասնակիցներին.

բ) մինչև 16 տարեկան 3 և ավել երեխա ունեցող ծառայողներին.

գ) ~~հաշմանդամ~~ հաշմանամություն ունեցող ամուսին կամ երեխա ունեցող ծառայողներին.

դ) 15 տարուց ավելի փրկարարական ծառայության ստաժ ունեցող ծառայողներին:

4. Եթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառով ծառայողը չի օգտվել հերթական և լրացուցիչ արձակուրդից, ապա արձակուրդը տրվում է հաջորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում:

Հերթական արձակուրդի ընթացքում հիվանդացած ծառայողի արձակուրդը երկարաձգվում է հիվանդության պատճառով չօգտագործած օրերի թվով՝ հիմք ընդունելով բուժող բժշկի և բուժհիմնարկի պետի (գլխավոր բժշկի) համապատասխան տեղեկանքը:

5. Ծառայության ընդունվելու և ծառայությունից արձակվելու տարում հերթական արձակուրդը հաշվարկվում է օրենքով հասանելիք արձակուրդի ընդհանուր տևողությունը 12-ի բաժանելու և ստացված օրերը լրիվ ծառայած ամիսների թվով բազմապատկելու միջոցով: Ընդ որում՝ ոչ լրիվ ամիսներն ու օրերը կլորացվում են՝ ավելացման միտումով:

6. Ծառայությունից ազատվելու դեպքում ծառայողին չօգտագործած հերթական արձակուրդի օրերի դիմաց վճարվում է դրամական փոխհատուցում, որի հաշվարկման և վճարման կարգը սահմանում է կառավարությունը:

(55-րդ հոդվածը փոփ., լրաց. 08.12.11 ՀՕ-305-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-289-Ն, 16.12.22 ՀՕ-488-Ն)

(16.12.22 ՀՕ-488-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)

Հոդված 78. Ծառայողների պարտադիր պետական ապահովագրությունը

1. Ծառայողները ենթակա են պարտադիր պետական ապահովագրության զոհվելու (մահանալու) դեպքերից:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ապահովագրությունը տարածվում է նաև ~~հաշմանդամ~~ հաշմություն ունեցող անձ ճանաչված ~~դարձած~~ ծառայողների վրա՝ աշխատունակության կորստի չափին համապատասխան, որը սահմանվում է տոկոսային հարաբերությամբ՝ զոհվելու (մահանալու) դեպքերից ապահովագրվելու համապատասխան՝ ընդհանուր գումարների նկատմամբ:

3. Ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, վճարման կարգն ու պայմանները սահմանում է կառավարությունը:

4. ***(մասն ուժը կորցրել է 16.12.22 ՀՕ-488-Ն)***

(78-րդ հոդվածը փոփ., լրաց. 22.12.10 ՀՕ-249-Ն, փոփ. 08.12.11 ՀՕ-305-Ն, փոփ., լրաց. 19.03.12 ՀՕ-103-Ն, փոփ. 16.12.22 ՀՕ-488-Ն)

(16.12.22 ՀՕ-488-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)